ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 22. 1856 ՆՈՅԵՄԲԵՐ 15.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Էր կամ Արայ Հայկազն։

Պղատոնի Հասարակապետութեան գրոցը մէջ հետաքրքրական պատմութիւն կամ զրուագ մը կը կարդանք որ Հայկազնի մը համար կրկին եւ հետաքրքրական պիտի ըլլայ և քննութեան արժանի, մէջ բերուած անձին ու աւանդութեանը պատճառաւ։ Այն անձն է Էր հայկազնը, որ մեռնելէն օրերով վերջը, կ'ըսէ Պղատոն, նորէն 'ի կեանս դառնալով՝ անդիու աշխարհքի հատուցմունքներն ու տեսածները կը պատմէ։ Թէ որ բոլոր պատմածներն ալ Հայու մը բերնէն կամ ականջէն յարմար ալ չերեւան, բայց տարակոյս չկայ որ բոլորովին ալ շինծու չենք կրնար համարիլ մեծիմաստ իմաստասիրին այս պատմութիւնը. որովհետեւ եթէ ազգային պատմութեան Արայ գեղեցիկ նահապետնուս վրայի պատմածին լաւ միտ դնելու որ ըլլանք՝ պէտք է վկայենք եթէ Պղատոն ազգային աւանդութենէ մը առած պիտի ըլլայ այս պատմութեանս հիմը։ Վասն զի, ինչպէս որ յայտնի է, Շամիրամ կէս մը իր սրտին կէս մ' ալ Հայոց տիրասէր ժողովրդեան աղմուկին ուզելով հանդարտեցընել, առաքինի նահապետին մահը սուտ ցուցընել կ'ուզէր, ձայն հանելով թէ "Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցին"[1]։ Զարմանք չէ թէ որ ռամկին աւելորդապաշտ մասը այս բանիս հաւատացած ըլլայ, զոր իրենց տիրոջն ու աստուածոցը սէրն ու համարմունքը իրենց հաւատալի ու կարելի կը ցուցընէր. եւ առաւել որ խաբեբայատիր Թագուհին Արայի նմանութեամբ մէկն ալ իրեն զգեստներովը՝ իբրեւ կենդանացեալ՝ ժողովրդեան էր ներկայացուցեր։ Այս

[1] Խոր. Ա. ԺԵ։

կ'երևայ ահաւասիկ Պղատոնի Երոսի վրայ պատմածին հիմը և հաւանականութիւնը ։

Գիտնալով որ այսպիսի ազգային պատուական աւանդութեան մը ծանօթութիւնը շատին պիտի փափագելի ըլլայ լայնաձակատ իմաստասիրէն լսել, մտադիւր սիրով կը թարգմանենք զայն հոս 'ի յունական բնագրէն, որով և ատեն մը տուած խոստմունքնիս[1] ալ հաւատարմութեամբ լցուցած կ'ըլլանք ։

“ Բայց, ըսի, ասոնք շատութեամբ ու մեծութեամբ ոչինչ են ան բաներուն քով, որ ան երկու տեսակ վախճանելոց պահուած կան անդին ․ ասոնք ալ պէտք է լսել, որ երկուքն ալ կատարեալ առած ըլլայ ինչ որ խօսքերնուս կարգին նայելով իւրաքանչիւրոց կ'իյնայ ։ — Ըսէ, ըսաւ, չէ թէ իբրև երկայն բան մը, հապա ախորժելի լսողին ։ — Սակայն, ըսի, քեզի ես չէ թէ Ալկինոսի, հապա Երոս հայուն, ծնընդեամբ պամփիւլացի քաջ մարդուն զրոյցը պատմեմ, որ երբեմն պատերազմի մէջ մեռած ըլլալով, տասներորդ օրը ապականած դիակները վերցուելու ատեն՝ զինքը ողջանդամ առեր տուն են տարեր թաղելու, ու տասուերկուերորդ օրը խարուկին վրայ դրուած տեղը կենդանացեր է, ու անանկ հոն տեսածները զրուցեր է ։

Կ'ըսէ եղեր թէ, երբոր հոգիս ելաւ՝ բազմութեան մը հետ գնացի, դիւցական տեղ մը հասանք, ուր երկրիս երկու մէկմէկու մօտ պատառուածքը կար, դիմացն ալ երկու ուրիշ՝ վերը երկինքին ։ Ասոնց մէջ տեղը դատաւորներ նստած էին, որ երբոր դատաստան կըտրեցին, արդարներուն հրամմեցին որ աջ դին վեր երկինք երթան, դատերնուն նշանները առջևնին կախելով ․ իսկ անիրաւներուն՝ ձախ դին ու վար, ասոնք ալ ամէն գործքերնուն նշանները ետևնին ունենալով ։ Երբոր ես ալ մօտ գնացի, ըսին որ Դուն պէտք է աս տեղի բաներուս պատգամաւոր երթաս մարդիկներուն, և հրամայեցին որ լսեմ ու տեսնեմ բոլոր հոն տեղի բաները ։ Ու տեսայ երկինքին ու երկրի երկու պատառուածքէն դուրս եկող հոգիները՝ դատաստաննին հոն կտրուելէն ետքը ։ Մէկ հատէն ոմանք կ'ելլէին երկրէս աղտոտ ու փոշոտ, իսկ մէկալէն ուրիշներ մաքուր կ'իջնային երկինքէն, որ հետզհետէ գալով, կարծես թէ երկայն ճամբէ հասած կ'երևէին, և ուրախութեամբ դաշտը վազելով՝ իբրև ամենաժողով հանդէսի մը մէջ կը հանգչէին, և ճանչուորները կ'ողջունէին իրար ․ և երկրէս եկողները մէկալոնցմէ աս տեղի բաները կը հարցընէին, երկինքէն եկողներէն ալ՝ ան տեղինները ։ Ու կը պատմէին իրարու, ոմանք լալով ողբալով, միտքերնին բերելով որչափ և որպիսի բաներ կրեր են ու տեսեր գետնի տակի ճամբուն մէջ, որ հազարամեայ ճամբայ մըն էր ։ Ոմանք ալ երկինքէն գալով, ան տեղի փափկութիւնները կը պատմէին և աննման գեղեցիկ տեսարանները ։

Բայց ասոնք, ով Գլաւկոն, շատ են և երկայն ատենի պատմելու բաներ ․ իսկ գլխաւոր ըսածն աս է համառօտ ։ Ամէն մէկը որչափ անիրաւութիւն ըրեր են և քանի հոգւոյ դէմ նէ, մէկիկ մէկիկ ամենուն ալ պատիժը պիտի քաշեն՝ ամէն մէկուն տեղը տասնապատիկ ․ այսինքն ամէն մէկ պատիժը հարիւր տարեկան, որպէս թէ այսչափ ըլլար մարդկային կեանքը, և անիրաւութեան պատիժն ալ տասնապատիկ վճարեն ։ Որ օրինակ, ով որ շատ սպանութիւններու պատճառ եղեր են նէ, կամ քաղաքներ մատներ են կամ զօրքեր, և գերութեան մէջ ձգեր են, կամ ուրիշ չարեաց մը գործակից եղեր են, աս ամենուն ամէն մէկին համար տասնապատիկ տանջանքը պիտի կրեն ։ Ու դարձեալ, ով որ բարեգործ և արդար և սուրբ եղեր են, ըստ նմին վարձք պիտի առնուն ։ Իսկ ծնածնուն պէս մեռնողներուն, և քիչ ատեն ապրողներուն համար՝ ուրիշ բաներ ըսաւ որ յի-

[1] Տես Բազմ. 1854 ամին, էջ 42 ։

չելու արժանի չէ ։ Բայց առ աստուածս և առ ծնողս բարեպաշտութեան և ամպարշտութեան, ու անձնասպանութեան հատուցմունքը աւելի մեծ կը պատմէր ։ Վասն զի կ'ըսէր որ հոն գտուեցայ երբոր՝ մէկը մէկալին կը հարցընէր թէ ո՞ւր է մեծն Արդիէոս. և աս Արդիէոսը Պամփիլիայի քաղքի մը մէջ բռնաւոր եղեր էր, հազար տարի առաջ, ծեր հայրը՝ մեծ եղբայրը մեռուցեր և ուրիշ շատ անօրէն գործքեր ըրեր էր, ինչպէս որ կը զրուցուէր ։ Իսկ հարցուողը պատասխանեց, կ'ըսէր, թէ Ոչ եկեր է այն հոս, և ոչ ալ պիտի գայ ։ Եւ ահա սոսկալի տեսարան մը տեսանք ։ Երբոր բերնին մօտ էինք ու դուրս պիտի ելլէինք՝ ամէն նեղութիւն քաշելէն ետքը, զանիկա ալ տեսանք յանկարծ, և ուրիշներ ալ, որոնց շատը գրեթէ բռնաւորներ էին. մեծ մեղաւորներուն մէջ կային քանի մը ռամիկ ալ, որ երբոր կը կարծէին թէ հա՛ պիտի ելլեն, բերանը չէր ընդունէր, այլ կը մռնչէր, երբոր այն անբժշկելի չարագործներէն մէկը, կամ բաւական պատիժը չքաշած մը, ելլել կ'ուզէր ։ Կային հոն, կ'ըսէր, վայրենի և հրավառ տեսքով մարդիկ, որ մռնչիւնը իմացածնուն պէս, կ'երթային զանոնք մէկիկ մէկիկ կ'առնուին կը տանէին ։ Իսկ Արդիէոսը և մէկալները՝ ձեռուընին ու ոտուընին ու գլուխնին կապելով, գետին կը կործանէին, և մորթերնին հանելով՝ դուրս կը քաշէին ճամբուն վրայ փշերու մէջ պատռտելով, և ետևէ ետև եկողներուն կը զրուցէին թէ ինչ բանի համար ան տանջանքը կը կրէին, և թէ պիտի առնուին տարտարոսը նետեն ։ Եւ հոն, կ'ըսէր, շատ կերպ կերպ վախերուն մէջ, ան վախը աւելի մեծ էր իրենց, թէ որ բերանը մռնչէր. բայց լռածին պէս, ամէն մէկը ուրախութեամբ կ'ելլէր ։

Պատիժները և տանջանքները այսպիսի էին, իսկ բարեգործութեանը ասոնց հակառակը ։ Երբոր դաշտը կեցողներուն եօթը օրը կը լմըննար, ութերորդ օրը անկից կ'ելլէին երթալու, և չորս օրէն կը հասնէին տեղ մը, ուսկից կը տեսնէին բարձրէն բոլոր երկնքին ու երկրին երեսը սփռած համատարած լոյս մը սեան պէս, մանաւանդ ծիածանի նման, բայց աւելի պայծառ և մաքուր, ուր առաջ երթալով կը հասնէին օրուան մը ճամբով. և՛ հոն լուսին մէջ կը տեսնէին երկնքէն երկնցած անոր կապերուն ծայրերը, զի ան լոյսը երկնքին կապն է, ինչպէս նաւերուն կողի գօտիները, այնպէս կը պատէ բոլոր շրջանակը. և ան ծայրերէն կախուած է Հարկին իլը, որ ամէն շրջապատներուն չորս դին կը դառնայ, որուն աղեկատը և ծայրը ադամանդէ է, իսկ լիսեռը խառն է անկէ և ուրիշ տեսակ քարերէ ։ Եւ լիսեռին շէնքը անանկ է ըստ ձևոյն, ինչպէս որ հոստեղինս. զի ըսածներէն հասկընալու է թէ անանկ էր՝ ինչպէս թէ մեծ ու փորած լիսեռի մը մէջ ուրիշ մէկ նման պզտիկ մ' ալ անցած ըլլայ, ու այնպէս ագուցած ինչպէս թակոյկները մէջէ մէջ որ դրուին. և այսպէս ուրիշ երրորդ մ' ալ, և չորրորդ մ' ալ և ուրիշ չորս մ' ալ. զի ընդ ամենը ութը լիսեռ էր, կլոր կլոր մէկմէկու մէջ մտած, որոնց շըրթունքը վերէն կ'երևար, և մէկ լիսեռի կռնակ կը ձևանար իլին չորս դին. աս ալ ութերորդին մէջը խոթած էր ։ Առաջինին ու դրսի լիսեռը ամենէն լայն շրթունքի շրջանակ ունէր, վեցերորդինը՝ երկրորդ, չորրորդինը՝ երրորդ, ութերորդինը՝ չորրորդ, եօթներորդինը՝ հինգերորդ, հինգերորդինը՝ վեցերորդ, երրորդինը՝ եօթներորդ, երկրորդինը՝ ութերորդ. և ամենէն մեծինը՝ խատուտիկ, իսկ եօթներորդինը՝ ամենապայծառ. իսկ ութերորդինը՝ փայլելուն եօթներորդէն գոյն կ'առնուր. իսկ երկրորդին ու հինգերորդինը մէկմէկու մօտ՝ անոնցմէ դեղնագոյն. իսկ երրորդը՝ ամենաճերմակ գոյն ունէր. իսկ չորրորդը՝ կարմրուկ. իսկ երկրորդը՝ ճերմակութեամբ վեցերորդը կ'անցնէր ։ Իսկ իլը պտըտելու որ ըլլայ՝ բոլոր ան շրջանը պիտի դառնայ, և բոլորն որ պտըտի, մէջի եօթը շրջանակները՝ բոլորին ներհակ ծանր պէտք է դառնան ։ Անոնց

ամենէն շուտ կը դառնայ ութերորդը, անկէ ետքը իրարու ետևէ եօթներորդը վեցերորդը և հինգերորդը․ իսկ երրորդը անանկ շարժմամբ կ'երթայ՝ որ կարծես թէ չորրորդը կը պտըտցընէ, չորրորդն ալ երրորդը, հինգերորդն ալ երկրորդը։ Իսկ ինքն իլը Հարկին ծնունկներուն վրայ կը պտըտի։ Եւ անոր ամէն մէկ շրջանին վրայ վերէն Համբարու մը կեցած մէկտեղ կը դառնայ՝ մէկ միակերպ ձայն մը ձգելով, բայց ութէն ալ մէկտեղ մէկ միաբան ներդաշնակութիւն մը կ'ըլլայ։ Իսկ անդին իրարմէ հաւասար հեռու մէյմէկ աթոռ նստած են Հարկին աղջիկները՝ Պարկայք, ճերմակազգեստ, գլուխնին պըսակ, Լաքեսիս, Կղոթով և Ատրոպոս, և Համբարուաց ներդաշնակութեանը հետ կ'երգեն, Լաքեսիս՝ անցածը, Կղոթով՝ ներկայն, Ատրոպոս՝ գալիքը։ Եւ Կղոթով աջ ձեռքովը բռնած կը դարձընէ իլին արտաքին շրջանակը՝ ժամ ընդ մէջ, Ատրոպոս ձախովը նոյնպէս մէջինները, Լաքեսիս ալ երկու ձեռքովն երկուքին ալ կը դպչի փոխն 'ի փոխ,,։

Կը շարունակուի։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Տէր, ե՞րբ տեսցես.

ՍՂՄ․

Արդ զի մահացուք փակեալ ունին զաչս,
Զաչս՝ յորմէ աղէտք հայցեն ըզգօրով,
Եւ յայն լոկ բացեալ որ արհամարհ չահ,
Կամ որ ոչ աղեացն ածիցէ վըրդով.

Արդ զի ատելի ցաւոցն արտասուք,
Յորոց մըղձկելոյն թեթեւանայ սիրտ՝
Որչափ յայլ ի սիրտ քամէ կամ ի ձեռս
Խառն յաղի վիժանման յատակին ըզգիրտ.

Արդ զի կորուսեալ վիշտք ըզպատկառանս
Զոր իբրու բախտին ազգէն պատարագ,
Եւ որպէս ըզբու ձախողակ հըմայս
Վըշտացեալքն ի ծաղր առնուն եւ յառակ.

Արդ զի հարկ է պինդ ունել ըզհառաչ
Ի սիրտն անդ հանգոյն ի շիջեալ հրաբուխ,
Հարկ՝ որչափ հրատապ ցաւքն իցեն եւ վէր,
Արտասուացն որչափ անհատաբար ուխ.

Արդ զի եւ երկնից կորեաւ լոյս կապոյտ,
Ուր սիրտն ըսփոփէր իբր յապաւնեաց տես,